

«Շիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2025-2026
Մաթեմատիկա (5-րդ դասարան)



Անուն Ազգանուն Հայրանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____



Մաթեմատիկան թագուհին է բոլոր գիտությունների...

Կ. Գաուս

Մաղթում ենք հաջողություն:

- Մի դասարանի աշակերտներին նստեցրին կլոր սեղանի շուրջ այնպես, որ հարևանությամբ նստածներն իրարից հավասարապես հեռու էին: Պատահականության սկզբունքով նրանցից մեկին տրվեց 1 համարով ցուցանակ, ապա ժամացույցի սլաքի ուղղությամբ բոլորին հերթականությամբ տրվեցին 2, 3 և մնացած համարներով ցուցանակները: 31 համարի ցուցանակ ստացողը նկատեց, որ իրենից մինչև 7 համարով աշակերտը եղած հեռավորությունը նույնն էր, ինչ իրենից մինչև 14 համարով աշակերտ հեռավորությունը: Քանի՞ աշակերտ էր նստած սեղանի շուրջ: (4 միավոր)



2. Տղան և հայրը միասին գնացին հրաձգարան: Հայրը գնեց փամփուշտներ և 10-ը տվեց տղային: Հայրը տղայի յուրաքանչյուր դիպուկ կրակոցի համար նրան տալիս էր ևս մեկ փամփուշտ, իսկ վրիպելու դեպքում նրանից վերցնում մեկ հատ փամփուշտ: 55 անգամ կրակելուց հետո տղայի մոտ փամփուշտ չմնաց: Քանի՞ անգամ էր տղան դիպուկ կրակել: (4 միավոր)

3. Քառակուսու վանդակներում թվերը դասավորեցին այնպես, որ երեք վանդակներից բաղկացած յուրաքանչյուր ուղղահայաց, հորիզոնական և անկյունագծային շարքերում գրված թվերի գումարները հավասար են: Այնուհետև որոշ թվեր թաքցրին՝ վանդակները ներկելով կամ ջնջելով թվերը: Գտնել երկու ներկված վանդակների թվերի գումարը և վերականգնել բոլոր վանդակների թվերը: (4 միավոր)

16		
		10
8		12

4. 7 կլոր միանման պիցցան պետք է հավասարապես բաժանել 12 հյուրերի միջև այնպես, որ պիցցաներից ոչ մեկը 4-ից շատ մասերի չբաժանվի: Գրի՛ր քո տարբերակը, եթե պիցցայի ոչ մի կտոր չպետք է ավելանա: (4 միավոր)

5. Երկու գերաններից կտրեցին երկու նույն չափի կտորներ, որից հետո առաջին գերանի մնացած մասը երկրորդի մնացած մասից երեք անգամ ավելի երկար էր: Կրկին յուրաքանչյուր գերանից կտրեցին նախորդ կտրված կտորների չափի մեկական կտոր, որից հետո առաջին գերանը դարձավ երկրորդից չորս անգամ ավելի երկար: Սկզբում քանի՞ անգամ էր առաջին գերանը ավելի երկար, քան երկրորդը: (4 միավոր)